

երբեմն 'ի դէպս դժուարինս. իսկ զուարթութիւն՝ իմա՝ ինձ զմեծութիւն ոգւոյ, եւ զառատութիւն ձեռին եւ սրտի, մեծագոյն աշխարհաց իշխեցողի վայելուչ, որով զարքունիս իւր եւ զամենայն դասու մարդկան վիճակ՝ ըստ իւրաքանչիւր պատշաճի յարդարեաց եւ ճոխացոյց. եւ 'ի վերայ այսոցիկ՝ ձգեաց առ ինքն զինքնագլուխ կամ զապստամբ եւ զուծացեալ տեարս այլալեզուս եւ այլակրօնս՝ կողմանց կողմանց, եւ բերդից մերձաւորաց եւ հեռաւորաց, կամովի խնդրել տալով զհովանաւորութիւն իւր, եւ աճեցուցանելով նոքօք զերկիր իւրոյ իշխանութեանն. որպէս զի՝ 'ի սուղ ժամանակի եղեն նորա պարոնայք լիճք եօթանասուններկու բերդից, աւագք եւ կրսերք, առաւել կամ նուագ ազատութեամբ. եւ բոլորակութիւն սահմանաց հայրենեացն, եթէ օրէն իցէ ասել, պարզեալ ձգեցաւ ընդ աջ եւ ընդ ահեակ, ընդ արեւելս, եւ մանաւանդ ընդ արեւմուտս. որպէս զի ըստ այսմ գծի՝ վեշտասան աւուրց գնացք ճանապարհի էին կալուածոց տէրութեան նորա յամի 1211, մինչ 'ի հարաւոյ ընդ հիւսիս՝ երկօրեայ եւեթ, այսինքն է 'ի ծովէ մինչեւ 'ի պատուարս Տաւրոսի՝ անջրպետս Փոփուգիոյ եւ Կապպադովկիոյ:– Իսկ հմտութիւն ձիավարժութեան իմանամ՝ ոչ լոկ ըստ Տրդատայն՝ «յերիվար կամակար աշտանակել եւ կորովի ձիավարել⁴, եւ զէնս շարժել յաջողակաբարս, եւ այլ պատերազմականս ուսանել ախորժակս», այլ յաւէտ ըստ հրահանգաց եւ օրինաց արեւմտեան ասպետութեան այնր դարու. զի պատմիչք մեր *ձիավարժս* կոչեն երբեմն զԱսպետս Խաչակրաց:

Բագում ինչ կամ բագում անգամ զբարոյական կրից եւ ձրից Լեւոնի յիշատակեալ է գրչաց, ըստ վերոյնշանակեալ բանից պատմչին, այլ ոչ եւ զփափագելի նկարագիր բնական հաստուածոյ նորին եւ զկերպարանացն, թէ որպիսի՝ ոք էր տեսլեամբ եւ հասակաւ. եւ զի լռեն գիրք (ծանօթքն ինձ), երաշխաւորեսցէ խնդրոյս վաւերական կնիքն ոսկեղէն, տպաւորեալն 'ի ճակատ պատմութեանս. որ զի բաւական մեծ է, անմարթ է թէ չկրիցէ՝ ըստ չափուն եւ ըստ ներելոյ արուեստին, գոնեա ընդ աղօտ՝ գտիպս կերպարանաց կնքողին. որ եւ՝ ըստ այսմ՝ թուի ինձ ոչ յաղթահասակ եւ անձնեայ ոք լինել. այլ սակայն, ըստ խորհրդածութեան Խորենացոյս մերոյ (Գ, Ը.) որ յԱղեքսանդր Մակեդոնացի, եթէ եւ «էր մարմնովն փոքր, այլ... չափ հասակին՝ ոչ զհոգւոյն խափանէր աշխոյժս»:– Ի հռչակաւոր մատենի լատին

⁴ Կամ *ձիս վարել*, ըստ այլում Օր. Խորենացոյ, Բ, ՀԹ: